

Գերմանները դատապարտելի եւ անտեղի խեղճութիւններ կը դործէին, ու Ֆրանսայի մտաւորականութիւնը բողոքի ձայներ կը բարձրացնէր: Երբ գերմանները սկսան ուժեղանալ պաշարուած Փարիզը, առաջին բռնակցումներն մին կ'իյնար Էքզու-Նորմալի պարտէզին մէջ, վնասելով չէն-քին մէկ մասը: Այդ տխուր օրերուն, Ֆրանսայի մտաւորականութեան կեդրոնը հանդիսացող այդ չէնքը, հիւանդանոցի վերածուած ըլլալով հանդերձ, չէր յար-գուէր անոր վրայ ծածանող Կարմիր Սաշի անբռնաբարելիութեան խորհուրդը:

Ի տես այս խեղճութիւններուն, դրա-դէտներու կողմէ ֆօլ տը Սէն-Վիքտուարի ձայնը կը լսուէր. «Ո՛րքան հեռու ենք այն Գերմանիայէն, զոր միամտօրէն կ'երա-դէինք, ոգեւորուելով իր դրադէտներովն ու վիպասաններովը: Գերմանիոյ և Ֆրան-սայի միջեւ առկաութեան վիճ մը բացուե-ցաւ, արտասուքի եւ արեան Հոնոս մը՝ զոր ոչ մէկ հաշտութիւն պիտի կարենայ լեցնել»:

Իսկ Գիտութեանց Կաճառին մէջ, Շը-ռէօյլ մի առ մի թուելով գերմանական վայրագութիւնները, բողոքագիր մը կը պատրաստէր, որուն ներքեւ կը ստորա-գրէին ժողովին ներկայ բոլոր անդամ-ները:

Երբ այս պատմական նիստին արձա-դանգը Փաստէօնի ականջը հասաւ, իր հայրենասէրի ոգին ալ բուռն կերպով ցըն-ցուեցաւ:

Մեծապէս կ'ազդուէր որ Փարիզէն բա-ցակայ ըլլալուն հետեւանքով չէր կրցած ինքն ալ ստորագրել բողոքագիրը: Անմի-ջապէս միտքը կ'իյնար Բրուսիոյ կայսեր անունով Պոնի համալսարանին կողմէ ի-րեն նուիրուած վկայականը, ու 18 Յուն-ուար 1871-ին այդ պաշտօնագիրը Պոնի համալսարանին կը վերադարձնէր, անոր կցելով հետեւեալ նամակը. «Ներկայիս այս մագաղաթին տեսքն իսկ զգուանք

կ'առթէ ինձ, ու նախատուած կը զգամ տեսնելով անունս մեծայարգ գիտնականի տխուր սով պճնուած ու հովանաւորուած՝ ալլելա հայրենիքիս առեւի դարձած Կիւյ-ետմի մականովը»:

«Սորին ցաւով, բողոքելով ականաւոր Պոնի քննադատներուն դէմ, որոնք ստորա-գրած են՝ ձեր Կաճառին կողմէ տրուած որոշումին ներքեւ, խղճիս արձակած ճի-շին անսալով, ներկայիս ձեռքէ կը խըն-դրեմ որ ջնջէք անունս ձեր համալսարանի դիւաններէն, եւ ետ առնէք վկայագիրս, ի նշան այն ցասումին որ կը համակէ Ֆրանսայի գիտնական մը՝ վայրագու-թիւնն ու կեղծիքը այն անձին, որ դո՛ւս-ցում տալու համար իր ոճրապարտ դո՛ւս-գութեանը, կը յամառի երկու մեծ ժողո-վուրդներու խողխողումը յաւերժացնել: Գրուած Առաջնայի մէջ, յետ ընթերցման այն անստուգանքի զրոյմին, որով խաբանեց ձեր թաղաւորին ճակատը, Բը-նական Գիտութեանց ականաւոր տնօրէնը՝ Պարոն Շըռէօյլ»:

Ահաւասիկ այն պատասխանը որ Պոնի համալսարանին նորեկ տնօրէնը կու տար Փաստէօնի. «Տխար, ստորագրեալս՝ Պոնի համալսարանի ներկայ տնօրէնը՝ յանձնա-ռու եղաւ պատասխանելու այն նախատին-քին, որ համարձակած էիք ընել գերման ազգին նուիրական կայսեր՝ Կիւյետմ ար-քային, իր խոր արհամարհանքը յայտնե-լով ձեզ: Տոկդ. Մոռիս Նէօման»:

Յ. Գ. — Մեր դիւանները պղծութենէ գերծ պահելու մտահոգութենէն խթան-ուած, ներթափելով՝ ձեզ կը յղենք ձեր գերմանագիրը»:

Փաստէօն վերոյիշեալ գրութեան հե-տեւեալ կերպով կը պատասխանէր.

«Պատիւը ունիմ ձեզ յիշեցնելու, Տիար տնօրէն, թէ պահեր կան՝ ուր արհամար-հանքի արտայայտութիւնը Բրուսիացիի մը բերնին մէջ՝ կը համահասարակ մե-ծայարգ գիտնականի տխուր տնօրէն, որ ժա-

մանակին պատճառաբանեալ կերպով ինձ կը յատկացնէիք, ձեր մէկ պաշտօնագրով: Հիմա, կարգաւորվ ձեր եւ իմ գրութիւննե-րը, սրտէս խոցոտուած կը զգամ տեսնե-լով որ ձեզի եւ ինձի պէս մարդիկ, որոնք նուիրաբերած են իրենց կեանքը ճշմար-տութիւնը որոնելու եւ մարդկային մտքին արդաւաճման նպաստելու, իրարու հա-նդէպ փոխադարձաբար այսպիսի լեզու մը կը դործածեն: Ահաւասիկ, զժբախտա-բար, արդիւնքներէն մին, ձեր կայսեր կող-մանէ այս պատերազմին պարտադրուած հանգամանքին: Սրբապղծութեան մասին կը խօսիք, Տիար տնօրէն, արդարեւ ան կը խօսիք, Տիար տնօրէն, արդարեւ ան կը զոյւթիւն ունի, ու պիտի շարունակէ մը-նալ ամենահեռաւոր ժամանակներու տե-ւողութեանը, ի յիշատակ անոնց՝ որոնք սկսան Փարիզի ուժեղութեամբ, այն պա-հուն՝ երբ այլեւս անօթութենէ անձնա-տուր ըլլալը անխուսափելի դարձած էր, եւ հակառակ ատոր՝ շարունակեցին այդ վայրագութիւնը, երբ բացայայտ դարձած էր ամէնուն համար, թէ ժամ մը իսկ չէր փութացնէր հերոսական քաղաքին անկու-մը»:

Փաստէօնի մատնանշածին պէս, ո՛ր-քան տխուր է արձանագրել այստեղ գիտնականներու միջեւ ծագած այս բա-նալէճը, ուրկէ միայն առեւտրական ժա-րըն է որ կը հոսէր: Եթէ ուշադրութեամբ կարդալու ըլլանք Փաստէօնի այս առթիւ գրաւոր շո՛ղոքները, պիտի տեսնենք, զրած զոյգ նամակները, պիտի տեսնենք, թէ Փաստէօն գրեթէ կը զղջար տող մը առաջ իր գրածէն, եւ աւելի լայնախոհ-ութեն ու մարդկօրէն մտածելով, երկու ազ-գերու յօշոտումը եւ անոնց միջեւ դոյու-թիւն ունեցող անհասկացողութիւնը կը վերադրէր մեծ մասով դո՛ւսով միապետի մը եւ անոր չըջապատին սնտիրաութեա-մը եւ անոր չըջապատ զէպքերն էին նը: Ժամանակն ու զժբախտ զէպքերն էին որ Փաստէօնի պէս մարդու մը պաղարիւ-նութիւնը կորսնցնել կու տային: Իր դրու-թիւններէն՝ առեւտրական աւելի վիշտն է

որ կը պոռթկայ. վիշտ մը՝ որ սեւ քօղի մը նման պատած էր պարտու-թենէն ու պատերազմի արհաւիրքներէն ջղազրգուած ժողովուրդի մը հոգին ու զգայարանները: Այդ նոյն հոգեբանու-թիւնն էր որ անոր բացաղանջել կու տար. «Պիտի ցանկայի որ Ֆրանսան դիմադրէր մինչեւ իր յետին մարդովն ու մարտկո-ցովը, որպէսզի բնութեան տարրերը մեզի օգնութեան հասնելով՝ ցուրտէն, թշուա-ռութենէն ու հիւանդութիւններէն փճա-նային այս բարբարոսները: Այլեւս, կե-նացս մինչեւ վերջին օրը, իւրաքանչիւր երկս իրրեւ վերնագիր պիտի կրէ՝ առե-լութիւն հանդէպ Բրուսիոյ, վրէժ ու վրէժ...»:

Հասարակարգը ի՞նչ պիտի գրէր Փա-տէօն, եթէ տեսած ըլլար ո՛չ թէ պատե-րագրիկ ժողովուրդի մը, այլ մեզի պէս անդէն, անտէր ու անտիրական փոքրիկ ազգի մը դանդաճային յօշոտումն ու լլկումը, 1914-ի պատերազմին ամբողջ տեւողութեանը ընթացքին:

Վստահ եղէք որ Փաստէօն հայ գրա-դէտին պէս պիտի բացաղանջէր.

«Այսօր չարիք քէ մոռանաւ
մեր որդիք,
Թող ողջ աշխարհի հայուն կարգայ
նախատիւն»:

Բայց յարատեւօրէն ու անխնայ արիւնը արիւնով կարելի չէ մաքրել, ժամանակը կ'անցնի ու կը մեղմացնէ կիրքերը, ու առանց բոլորովին մոռնալու անցեալը, մարդիկ եւ ազգերը իրենց վրէժը կը լու-ծեն, ոչ թէ լոկ հուրով ու սուրով պատե-րագրի դաշտերուն վրայ, այլ նաեւ իմա-ցական ու բարոյական մարզերուն մէջ, համամարդկային դեղեցիկ եւ օգտակար նուաճումներ ընելով՝ մարդն ու ազգը բարձրացնելով: Երբ Ֆրանսան կը խաղա-ղէր, Փաստէօն ահա այդ ձեւով ուզեց

պալատին չբեղ ու ընդարձակ դահլիճը: Փաստէօն կաղալէն երբ սրահ մտնելով վը յառաջանար, հանդիսութեանց ղեկավարներէն մին կը սիրտթար զայն ղեմաւորելու եւ ականաւոր անձնաւորութիւններու յատկացուած ատենը առաջնորդելու:

Ճիշտ այդ պահուն սրահը կը թնդար որոտընդոստ ծափահարութիւններով ու բացաղանչութիւններով: Փաստէօն՝ չփութած, պահ մը կ'անշարժանար, ու միամտօրէն կ'ըսէր իր տղուն ու փեսային. «Անտարակոյս Կալէսի իշխանն է որ մուտ կը գործէ, քիչ մը աւելի կանուխէն գալու էինք»: Համաժողովին համակրելի նախագահը՝ Սըր Ճէյմս Բաթէ քնքուշ ծիծաղով մը Փաստէօնի կը պատասխանէր. «Բայց հանրութիւնը ձեզ է որ կ'ողջունէ»: Բացման ճառին մէջ Սըր Ճէյմս Բաթէ կ'ըսէր, թէ «Բժշկութիւնը երեք վեհագոյն նպատակներ կը հետապնդէ, որոնցմէ մին՝ նորոյթն է, միւսը՝ օգտակարութիւնը, իսկ երրորդը՝ ողորմութիւնը: Այս երրորդութիւնը ահա Փաստէօնի հանձարին մէջ մարմնացած կը գտնենք»: Սրահը կրկին ու կրկին վը թնդար կեցցէներով եւ ծափահարութիւններով, պարտադրելով Փաստէօնի՝ որ բազմաթիւ անգամներ ոտքի ելլելով իր շնորհակալութիւնը յայտնէր: Այս հոգեւէն տպաւորութիւններու ազդեցութենէն օգնութեամբ, նոյն օրն իսկ իր կնոջը կը գրէր.

«Հպարտ էի, հպարտ էի ներքսպէս, ոչ թէ ինձ համար — դուն շատ բաւ ծանօթ ես յաղթանակներու հանդէպ ցոյց տուած վերաբերմունքին — այլ երկրիս համար: Միակն էի որ բացառիկ յարգանքի արժանացայ օտարներու հոծ բազմութեան մէջ, ուր մասնաւորապէս Գերմանները մեծ թիւ մը կը կազմէին, Փրանսացիներէն աւելի բազմանդամ, հակառակ որ մեր պատուիրակութեան թիւը 250-էն պակաս է: Ժան Պատիստն ու Ռընէն ալ ներկայ էին (Փաստէօնի փեսան եւ տղան): Կրնաս երեւակայել իրենց յուզումը»:

Համաժողովին առաջին այս արարը Փաստէօնի համար գերազոյն երջանկութեան աղբիւրի մը կը վերածուէր, ուր՝ իր անձէն աւելի՝ իր հայրենիքն էր որ կը փառաւորուէր:

Նոյն օրը, առաջին նիստէն անմիջապէս ետքը, տօնակատարութիւններու երկրորդ արարին, Փաստէօնի այնպիսի անակնկալ մը վերագրուած էր որ հաճոյք պատճառելէ աւելի՝ տհաճութեան եւ չփութեան պատճառ պիտի դառնար: Սըր Ճէյմս Բաթէի բնակարանին մէջ, ի պատիւ համաժողովի կարգ մը անդամներուն հացկերոյթ կը տրուէր, ուր ներկայ վը գտնուէին Կալէսի իշխանն ու Բրուսիոյ դահաժառանգը:

Այս անհաճոյ հանդիպումին առթած հոգեկան ցնցումը լիովին ըմբռնելու համար կ'արժէ որ հետեւինք Փաստէօնի կողմէ կնոջը ուղղուած նամակին պարունակութեանը. «Սըր Ճէյմս Բաթէի աջին՝ Բրուսիոյ իշխանը, իսկ ձախին՝ Կալէսի իշխանը նստած էին, ուրիշ 25-30 սեղանակիցներով: Սըր Ճէյմս զիս ներկայացուց Կալէսի իշխանին՝ որուն առջեւ խոնարհեցայ, իրեն ըսելով՝ երջանիկ եմ ողջունելու Փրանսայի մէկ բարեկամը:

— Այո՛, պատասխանեց, մէկ մեծ բարեկամը:

Սըր Ճէյմս Բաթէ բարի գաղափարը յղացաւ, ինձ չգիմելու Բրուսիոյ իշխանին ներկայացուելու համար: Որքան ալ որ այսպիսի պարագաներուն մի միայն քաղաքավարական նկատումներն են որ կ'իշխեն, երբեք պիտի չուզէի փափաք յայտնել իրեն ներկայացուելու: Բայց ահա ինքնաբերաբար անիկա ինձի մօտենալով ըսաւ.

— Պարոն Փաստէօն, թոյլ տուէք որ ես ինքս ներկայացնեմ ձեզի, ըսելու համար թէ քիչ առաջ ձեզ ծափահարեցի»:

Փաստէօնի զգայուն սիրտը լիովին զիտցաւ գնահատել Փրեստերի Գ.ի այս զեղեցիկ ծեսը: Ի վնաս երկու մեծ աղ-

ղերու փոխյարարերութիւններուն, Փրեստերի Գ.ի մի միայն հարկը օր կը վեճակուէր դահլիճ վրայ մնալու: Ահա այս միջադէպը զեղեցիկ դաս մըն է մարդկային իրարհասկացողութիւնը պանծացնող, ու անսահման վեհութիւն մը կը ցոյցնէ:

Հակառակ այս կազդուելի երեւոյթին, Փաստէօն շարունակեց իր ժխտական վերաբերմունքը գերման մտաւորականութեան հանդէպ:

Իր մահէն չորս ամիս առաջ, 1895-ի Մայիսի վերջերը, Պերլինի Գիտութեանց Կաճառը նախաձեռնարկ կ'ըլլար ցանկ մը ներկայացնելու կայսեր գնահատանքին, այդ շրջանին ապրող ականաւոր անձնաւորութիւնները չքանչանով մը պատուելու համար:

Գերմանները, աշխարհահռչակ գիտնականներու համաստեղութեան մէջ նկատի կ'ունենային Փաստէօնն ալ, բայց չէին մոռցած Պոնի միջադէպը, ուստի կարգադիր յանձնախումբը նպատակադարձար կը դիր յանձնախումբը Փրանսայի գիտնականին դատէր կանխաւ Փրանսայի գիտնականին դիմել, անոր համամտութիւնը ապահովելու համար: Փաստէօն անդրդուելի կը գտնուէր, ու հետեւեալ պատասխանը կու տար. «Իբրեւ գիտնական՝ մեծապէս յարգւած կը զգամ Պերլինի Գիտութեանց Կաճառին բարի նկատումներէն, բայց կը ցաւիմ որ պիտի չկարենամ ընդունիլ այդ առաջարկը»:

Ահա թէ Փաստէօն ինչպիսի՛ խանդով կը սիրէր իր հայրենիքը: Որոշ գէպերու ազդեցութեան ներքեւ թէ կը բոցալաւէր իր հայրենասիրութիւնը ու ատելութիւնը կը հրահրէր, այդ կ'ապացուցանէ թէ ամենամեծ հանձարին ու ամենամեծ մարդասէրին քովն իսկ հայրենիքի զգացումը այնպիսի խոր արմատներ ունի, որ անոր մէկ փոքրիկ ծիլին իսկ ձեռք դարնելու չի դար: Եթէ մարդկութիւնը կ'ուզէ խաղաղութեան ու եղբայրակցութեան շինի միջոցաւ ինչ ապրիլ, իւրաքանչեւ

չիւր ազդ պէտք է յարգէ միւսներուն իրաւունքները:

Փաստէօնի պէս մարդկային մեծութիւն մը, համակ սէր ու բարութիւն մարմնացնող այդ անձնաւորութիւնը, որ գիտցաւ ներել մարդկային ամէն տեսակի տրակարութիւններուն եւ կրցաւ մոռնալ հայրենիքին դէմ գործուած տոնձգութիւնները, ցատուուն ու տպաւորիչ օրինակ մը կը հանդիսանայ ապացուցանելու համար՝ թէ հայրենիքը գերիվեր է ամէն բանէ, ու պէտք է կուրօրէն, ամենայն երկիւղածութեամբ յարգուի անոր անբռնարարելիութիւնը:

Պիղմարք ամենամեծ սխալը գործեց, Փրանսան արիւնլուայ ընելով բացաղանչել. «Ոյժը կը գերազանցէ իրաւունքը»:

Ճիշտ է, ոյժը կրնայ առժամանակեայ կերպով ինքիւնքը պարտադրել, սակայն երբեք չի կրնար նսեմացնել իրաւունքը. առաջինը՝ անկայուն, յարափոփոխ ու կոպիտ աղբակ մըն է, որ այսօր կայ եւ վաղը չկայ. իսկ երկրորդը՝ հոգիներուն մէջ կայուն եւ հաստատուն հիմեր ունի, անբռնարարելի է, կրնայ սարսիլ՝ բայց երբեք չի կորսուիր, յաւիտենական արժէք մըն է, ու միշտ կը պահէ իր գոյութիւնը:

Առաջինը՝ զանգուածներն ու միջակ իսկ Փաստէօնները կ'ըմբոստացնէ, անոնց ատելութիւնը կը հրահրէ, մինչդեռ իրաւունքին յաղթանակով՝ կիրքերը կը խաղաղին ու մարդիկ կ'ազնուանան:

Ուժին կը թնամ բազուկը, որ Պիղմարք անընկճելի կը նկատէր, 1870-էն առդին, երկու անգամ ռազմադաշտերու վրայ փայլուն յաղթանակներ տանելով հանդերձ, խղճալիօրէն պարտուեցաւ ու փրկուեցաւ, եւ չկրցաւ լուցնել ոչ Փաստէօններու ձայնը եւ ոչ ալ անոնց քարոզած ատելութիւնն ու վրէժը, ընդհակառակն՝ նոր վէրքերով խոցոտեց մարդկութեան սիրտը:

ԲԺՂ. Պ. ՄԻՍԱԿԵԱՆ

(Շարունակելի)